Հայոց լեզվի և (հայ) գրականության ուսուցիչների վերապատրաստման դասընթաց

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝

Հայոց լեզվի և գրականության ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

Կատարող՝ Նաիրա Կոստանյան

Դպրոց՝ Երևանի Սամվել Գևորգյանի անվան Հ. 189 ավագ դպրոց, ՊՈԱԿ

Առարկա՝ Հայոց լեզու և գրականություն

Կազմակերպություն՝ «Երևանի Լեոյի անվան №65 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Խմբի պատասխանատու՝ Անահիտ Զոհրաբյան

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն ---------- 3
Ընտանիքի դերը երեխայի դաստիարակության գործում ---------- 4-7
Ընտանիքի և դպրոցի համագործակցության հիմնական տեսակները ---------- 7-9
Դպրոցի աշխատանքը ծնողների հետ ---------- 9-12
Երեխաների և ծնողների հետ աշխատանքի ոչ ավանդական ձևերը ---------- 12-13
Ընտանեկան դաստիարակության բովանդակությունն ու ձևերը ---------- 13-16
Դպրոցի ծնողական կազմակերպությունները և դրանց գործառույթները -------- 16-17
Ընտանիք-առողջ համագործակցությունը՝ որպես երեխայի սոցիալականացման կարևոր միջոց ---------- 17-18
Եզրակացություն ----------19-20
Օգտագործված գրականության ցանկ ---------- 21

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության անկախության ձեռքբերումից հետո ընտանիքի դպրոցի և սովորողների նկատմամբ ուշադրությունը գնալով մեծանում է և դառնում է տարբեր գիտությունների ուսումնասիրման առանցքը: Ընտանիքը կազմում է պետությամ մի մասնիկը և միաժամանակ հանդես է գալիս, որպես առողջ և ամուր պետության գրավական: Հիմնական պատճառն այն է, որ ընտանիքը անձի ձևավորման խնդրում կատարում է կարևորագույն գործառույթ: Ընտանիքը դիտարկվում է որպես փոքր սոցիալական խումբ՝ իր յուրօրինակ կառուցվածքով, զարգացման միջանձնային հարաբերություններով ու դաստիարակության հատուկ մեխանիզմներով:

Ակնհայտ է, որ ընտանիքը համարվում է սովորողի սոցիալական միջավայրի ամենագլխավոր և կարևվորագույն ինստիտուտը, որի միջոցով երեխան յուրացնում է հիմնական սոցիալական մշակույթը, գիտելիքները և մարդկության ու սեփական ժողովրդի գրական, ստեղծագործական անցյալն ու ձևավորում իր վերաբերմունքը ապագայի հանդեպ:

Այստղ է ձևավորվում արժեքային համակարգը, բնավորության գծերը, ինչպես նաև հասարակության սոցիալական խմբերի և տարբեր շերտերի մարդկանց հետ շփվելու կարողությունները, ինչը նրան օգնում է դիմակայելու կյանքի դժվարությունների և ճիշտ կողմնորոշվել ստեղծված բարդ իրավիճակներում, ինչպես նաև փոխհարաբերություններ ունենալ շրջապատի մարդկանց հետ: Միջավայրի ազդեցությունը էապես ազդում է ընտանիքում երեխայի դաստիարակության ընթացքի վրա:

Հենց այս հանգամանքով է պայմանավորված մեր կողմից թեմայի նկատմամբ հետաքրքրությունն ու ընտրությունը:

Ընտանիքը կենտրոնական դիրք է գրավում երեխայի դաստիարակության գործում, կարևոր դեր է խաղում նրա աշխարհայացքի և վարքի բարոյական նորմերի ձևավորման մեջ:

Ընդանիքը դպրոցական կոլեկտիվի հիմնասյունն է:

Դպրոցի և ընտանիքի մանկավարժական փոխհարաբերությունները կայանում են սովորողի անհատական զարգացման և աճի ձևավորման համար բարենպաստ պայմանների ստեղծմանը, մարդու ակտիվ կյանքի կազմակերպմանը և վերջապես արժանապատիվ կյանք վարելու ձգտմանը: Ծնողների հետ համագործակցության ընթացքում ուսուցչի հիմնական խնդիրն է ակտիվացնել ընտանիքի մանկավարժական, դաստիարակչական գործունեությունը, դրան տալ նպատակաուղղված, հասարակական նշանակության բնույթ: Ուումնադաստիարակչական գործընթացի բոլոր մասնակիցների փոխհարաբերությունները, կյանքից վերցրած բոլոր օրինակները և հոգևոր արժեքները նպաստում են անհատականության ձևավորմանն ու զարգացմանը: Դպրոցի և ընտանիքի փոխհարաբերությունները պետք է հենված լինեն փոխադարձ վստահության վրա, այդ պատճառով էլ ուսուցիչը պետք է գործի՝ հաշվի առնելով, թե ում հետ է ապրում երեխան, ինչ պայմաններում, ընտանիքի սոցիալական կարգավիճակը և այլն:

Դպրոցի և ընտանիքի համագործակցության հիմնական պայմանը միմյանց գործառույթների բովանդակության մասին տեղեկացված լինելն է, որպեսզի այս սուբյեկտները կարողանան հասկանալ միմյանց և պատկերացնեն դաստիարակության հնարավոր ձևերը, կարողանան հաստատել փոխօգնության իրական գործողություններ, հստակ պատկերացնեն դաստիարակության խնդիրները, միջոցներն ու վերջնարդյունքները:

Դպրոցի աշխատանքը ծնողների հետ իրականացվում է տարբեր ուղղություններով՝ ողջ ծնողական կոլեկտիվի, խմբով կամ անհատական և այլն:

Դաստիարակության գործընթացում ընտանիքի և դպրոցի համագործակցությունը անհրաժեշտ է այն պատճառով, որ ծնողները ցանկանում են իրենց երեխաներին տեսնել որպես հասարակության արժանապատիվ քաղաքացիներ:

Առանց ընտանիքի օգնության դպրոցը չի կարող ապահովել դաստիարակության բարձր աստիճան: Եթե դասղեկի և ծնողների մեջ կան վստահելի

փեխհարաբերություններ, ապա նա կարող է ծնողին խնդրել կիսվել իր դիտարկումներով ու դաստիարակչական հիմնախնդիրներով: Այս ամենով ապահովվում է դպրոցի, ընտանիքի և դասարանական կոլեկտիվի պահանջների միասնությունը:

Ուսուցիչները հենվում են ընտանեկան դաստիարակության դրական փորձի վրա՝ օգտագործելով այն դաստիարակչական գործընթացում, որի միջոցով ուժեղանում են դրական գործընթացներն ու շարժառիթները – դանդաղեցվում են բացասական երևույթները:

Սովորողների համար ընտանիքը ոչ միայն բնակության վայր է, այլև դաստիարակման միջավայր: Ընտանիքի ազդեցությունը շատ ավելի արժեքավոր է երեխաների կյանքի սկզբնական շրջանում և գերակայում դաստիրակչական այլ ազդեցություններին: Որքան լավն է ընտանիքը, այն այնքան լավ է ազդում սովորողների դաստիարակության վրա, և հետևաբար բարձր նրա ֆիզիկական, բարոյական, աշխատանքային դաստիարակության մակարդակը անհատի ձևավորման գործում: Հաշվի չառնելով բացառությունները՝ կարող ենք ասել, որ ընտանիքի և նրանում դաստիարակվող անձի փոխկապակցվածությունը հաստատուն է: Քանի որ ընտանիքի աղդեցությունը անձի ձևավորման վրա շատ կարևոր է, ուստի պետությունն ու հասարակությունը պետք է մեծ ուշադրություն դարձնեն ընտանիքներում ապագա քաղաքացու ճիշտ դաստիարակության կազմակերպման հարցերին: Ընտանիքը ընկած է անձի ճիշտ դաստիարակության հիմքում: Այն անձնային որակները, որոնք ձևավորվում են լիարժեք ընտանիքում, բացակայում են որբ երեխաների մոտ: Ընտանեկան դաստիարակությունից զուրկ սովորողների վերաբերյալ մեծ հոգածություն է ցուցաբերում պետությունը՝ ստեղծելով բազմաթիվ հաստատություններ և ինստիտուտներ, որոնք հնարավորինս փոխարինում են ընտանեկան միջավայրին իրականացնում են նմանօրինակ երեխաների դաստիարակության ու ուսուցման գործընթացը:

Կարելի է եզրակացնել, որ սովորողների դաստիարակությունը իրականացվում է ընտանիքի, դպրոցի, հասարակության և պետության համատեղ ջանքերով և ընտանիքի դերը երեխայի դաստիարակության գործում շատ մեծ է ու անժխտելի: Ընտանիքի ազդեցությունը սովորողների դաստիարակության զարգացման ու ձևավորման վրա անփոխարինելի է, որովհետև յուրաքանչյուր խելամիտ ծնող ավելի լավ է ճանաչում իր

երեխաներին, գիտի նրանց առանձնահատկությունները, անհատականությունները, քան որևէ ուսուցիչ կամ դաստիարակ:

Ընտանիքում երեխայի ճիշտ դաստիարակության առաջին պայմանն ընտանեկան կոլեկտիվի ձևավորումն ու զարգացումն է, նրա անդամների մեջ պարտքի և պատասխանատվության զգացման, ամուր կարգապահության ստեղծումն ու ամրապնդումը:

Ընտանեկան դաստիարակության երկրորդ կարևոր պայմանը չափավորությունն է ամեն ինչում: Չի կարելի երեխային անընդհատ սիրել, գովեստի արժանացնել, կատարել նրա բոլոր ցանկությունները կամ միշտ առհամարել, պատժել և ոչ մի պահանջ չկատարել: Շահում են այն ծնողները, ովքեր երեխաների դաստիարակությունն իրականացնելիս ամեն ինչ անում է չափավոր և այն դարձնում ամենօրյա կանոն:

Սովորողների դաստիարակության երրորդ կարևոր պայմանը ծնողների սկզբունքային կայունությունն է: Պետք է միշտ հիշել, որ անսկզբունք, անվճռական մարդը միշտ կմնա իր երեխաների ծառան, դաստիարակության մեջ ոչ մի հաջողության չի հասնի, իսկ ծնողների սկզբունքայնությունը, վճռականությունը, օբյեկտիվությունը երեխաներին ճիշտ դաստիարակելու կարևվոր երաշխիքներից է:

Սովորողների դաստիարակության չորրորդ կարևոր պայմանը երեխաների հայրենասիրական, հումանիստական, կոլեկտիվ աշխատանքներին պատրաստ լինելու ձևավորումն ու դաստիարակումն է: Ընտանիքը որպես կոլեկտիվ դիտարկվում է ինչպես հասարակության առաջնային օղակ և իր բնույթով շատ բազմազան է:

Սովորողների համատեղ դաստիարակության հարցում դպրոցը միշտ պետք է հաշվի առնի յուրաքանչյուր ընտանիքի կառուցվածքային առանձնահատկությունները:

Ընտանիքի և դպրոցի համագործակցության հիմնական տեսակները

Ընտանիքի և դպրոցի համագործակցությունն հիմնականում իրականացվում է դասղեկի միջոցով:

Պատմության ուսուցչի հիմնական պարտականություններից է սովորողների մոտ ինքնուրույն ճանաչողական հետաքրքրությունների, ուսման նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի, հայրենասիրության, մտավոր աշխատանքի և

գիտակցական կարգապահության մշակույթի ձևավորումն է: Երբ ընտանիքը դպրոցի վերաբերյալ սովորողի մոտ սերմանում է հարգալից վերաբերմունք դպրոցի, ուսուցչի նկատմամբ, այդ դեպքում սովորողը չի խուսափում դպրոցից, հաճախում է սիրով և մեծ հետաքրքրությամբ: Իսկ երբ դպրոցը սովորողին ներկայացվում է որպես մի հաստատություն, որտեղ սահմանափակվում է երեխայի ինքնուրույնությունն ու ազատությունը, երբ ուսուցչին ներկայացնում են այդ ամենը վերահսկող, այդ դեպքում երեխաների վերաբերմունքը դպրոց հաճախելուն դառնում է բացասական: Ուսուցիչը սովորողների ծնողների հետ պետք է հանդիպի ոչ միայն որևէ խնդրի առկայության դեպքում և ծնողական ժողովների ժամանակ, այլ ինչպես վերը նշեցինք, անհրաժեշտ է, որ ուսուցիչը ճանաչի սովորողների ընտանիքները: Այդ դեպքում ուսուցչի, ծնողների և սովորողների միջև հաստատվում է բարիդրացիական հարաբերություններ և որքան էլ ուսուցիչը ծանոթ լինի իր աշակերտի հետ, նա չպետք է միջամտի նրա ընտանեկան, անձնական կյանքին:

Ծնողներն ու մանկավարժները, համախմբելով իրենց ուժերն ու մանկավարժական ջանքերը, պետք լավ իմանան այն հիմնախնդիրները, որոնց լուծման համար պետք է միասին աշխատեն: Այդ հիմնախնդիրների շրջանակակը շատ լայն է և որոշակի պայմանական սկզբունքով դրանք կարելի բաժանել երեք հիմնական սկզբունքների.

Առաջին խմբին պատկանում են դպրոցի և ընտանիքի այնպիսի խնդիրներ, որոնք կապված են ուսումնադաստիարակչական նպատակների հետ:

Երկրորդ խումբե կազմում են ընտանիքում սովորողների անհատականության զարգացման աշխատանքների հետ կապված հիմնախնդիրները:

Երրորդ խմբին են պատկանում ընտանեկան դաստիարակության ընթացքում սովորողների տարիքահոգեբանական և անհատական աառանձնահատկությունների հիմնախնդիրների հաշվառումը:

Ինչումն է կայանում այս հիմնախնդիրների էությունը և ինչպիսի համատեղ աշխատանք պիտի կատարեն դպրոցն ու ընտանիքը այդ հիմնախնդիրների լուծման գործում:

Շատ կարևոր է, որ ծնողները գիտակցեն դաստիարակչական նպատակասլաց դրույթները, որոնց հիմքում ընկած են քաղաքացու ձևավորումն ու ուշադրությունը՝ ոչ միայն սովորողների ուսումնական գործունեության վրա, այլև այն ջանքերը, որոնք պետք

է ներդնեն սովորողների ֆիզիկական, բարոյական, գեղագիտական դաստիարակության հարցում: Գաղտնիք չէ, որ որոշ ծնողներ ջանքեր են գործադրում միայն սովորողների գիտելիքների բարձրացման ուղղությամբ, անտեսելով նրանց բազմակողմանի զարգացվածության նշանակությունը: Դաստիարակությունը իր մեջ ներառում է սովորողների ստեղծագործական ունակությունների և հմտությունների ձևավորման ու զարգացման հարցերը:

Ծնողների պահանջները երեխաների նկատմամբ պետք է հիմնված լինեն փոխադարձ հարգանքի վրա: Դպրոցի խնդիրն է ծնողների կողմնորոշել սովորողների նկատմամբ բարեհամբույր և ուշադիր վերաբերմունք ցուցաբերել՝ հաշվի առնելով նրանց հետաքրքրությունները՝ կապված գիտելիքների, ընթերցանության և այլ խնդիրների հետ, ինչպես նաև գեղագիտության, սպորտային և առողջապահական միջոցառումների կազմակերպման հարցերում:

Սովորողների անհատական զարգացման խթանող գործոն է հանդիսանում ընտանիքում աշխատանքային մթնոլորտի ստեղծումը: Ընտանիքը պետք է օժտված լինի աշխատանքային կոլեկտիվի հատկանիշներով, որտեղ երեխաները ընտանիքի նյութական բարեկեցության հարցում իրենց ներդրումն ունենան, որն էլ պետք է չափորոշիչ լինի սովորողների ցանկությունների հարցում:

Ծավոք, ոչ միշտ է, որ բոլոր ծնողները գիտակցված մոտեցում են ցուցաբերում սովորողների տարիքահոգեբանական և անհատական առանձնահատկություններին:

Ծնողի և ուսուցչի համագործակցության օգուտները

Երբ ընտանիքները գործունյա կերպով մասնակցում են դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներին, բոլորն էլ, թե ուսուցիչները, թե ծնողները և թե սովորողները զգում են դրանց օգուտները: Ուսուցիչները անկաշկանդ մթնոլորտ են ստեղծում այդ աշխատանքներում ներգրավման համար՝ ծնողներին խրախուսելով հարցեր տալ, ներկա լինել դասերին և հաղորդակից դարձնել իրենց հետաքրքրություններին ու հմտություններին և կարողություններին:

Ներգրավվածության առավելությունները շատ են: Մի կողմից ուսուցիչներն իմանում են, որ ծնողները հոգ են տանում իրենց երեխաների կրթության համար, մյուս

կողմից՝ ծնողներն են ճանաչում ուսուցիչներին, ինչն էլ իր հերթին զգալիորեն հեշտացնում է ուսուցիչների հետ հաղորդակցվելն ու զրուցելը: Ծնողները տեղյակ են լինում նաև այն ամենի մասին, ինչ կատարվում է մյուս դասարաններում, իսկ դա նույնպես անհրաժեշտ է, քանի որ շատ շուտով նրանց երեխան էլ կհայտնվի այդ դասարանում:

Դպրոցի աշխատանքը ծնողների հետ

Ծնողների հետ ուսուցիչն առաջին անգամ խորհրդակցում է դասերն սկսվելուց մեկ շաբաթ առաջ: Այդ հանդիպման նպատակը ծանոթանալն է: Ուսուցիչն հանդիպում է երեխային ու ծնողներին, տեղեկանում, թե ծնողներն իրենց երեխայի համար ինչ կցանկանային առաջիկա ուսումնական տարվա ընթացքում և հաստատում է ընտանեկան անկեղծ հարաբերություններ, որոնք շարունակվելու են ողջ ուսումնական տարվա ընթացքում:

Մեր երկարամյա մանկավարժական փորձը վկայում է, որ ուսուցիչների և ծնողների պաշտոնական և ոչ պաշտոնական հարաբերությունները հիմք են ծառայում ծնողներին ապագայում ներգրավելու համար համապատասխան աշխատանքներում: Ուսումնական տարվա ընթացքում ծնողների հետ խորհրդակցությունները պետք է ներառեն հետևյալ խնդիրները. ուսումնական տարվա առաջին մի քանի շաբաթբա ընթացքում ուսուցիչն առանձին թղթապանակում գրանցում է յուրաքանչյուր սովորողի կենսագրական տվյալները, անհատական գնահատականները, աշխատանքային օրինակները ը այլն: Այդ թղթապանակը արտահայտում է սովորողի զարգացման տվյալները ժամանակի ընթացքում:

Ծնողական ժողովներին նախապատրաստվելիս ուսուցիչը, պետք է նորից աչքի անցկացնի իր նկատառումները, գրառումները, առաջադիմության թերթիկները, ավելի վաղ կայացած ժողովների զեկույցները, ծնողների մտահոգությունները, յուրաքանչյուր սովորողի համար մշակված նպատակները: Խորհուրդ է տրվում գրի առնել այնպիսի կարևոր տվյալներ, ինչպիսիք են՝ սովորողին առանձնապես հաճույք պատճառող զբաղմունքները, նրա մտերիմ ընկերների անունները և իր այն դիտարկումները, որոնք հանրագումարի են բերում սովորողի փորձառությունները զարգացման բոլոր

բնագավառներում: Հանգամանալից նախապատրաստումը ծնող-ուսուցիչ խորհրդակցության նկատմամբ արհեստավարժ մոտեցման բնութագիրն է:

Ծնողների հետ ուսուցչի անհատական զրույցները, խորհրդակցությունները օգնում են նրան անմիջական կապ ստեղծել սովորողի ընտանիքի յուրաքանչյուր անդամի հետ, նրանց հետ համագործակցելով՝ գտնել սովորողի վրա ազդեցության ճիշտ ուղիներ: Ուսուցչի և սովորողի ընտանիքի անդամների փոխըմբռնումները օգնում են սովորողի ընտանեկան դաստիարակության հարցում վերացնել բացասական և ամրապնդել դրական գործոնները: Ուսուցիչները ծնողների հետ համատեղ քննարկում են սովորողների՝ ուսման մեջ, վարքում առաջացած թերությունները, ուղիներ փնտրում դրանց հաղթահարման համար:

Մեր մանկավարժական փորձը ցույց է տվել, որ ծնողի հետ պետք է զրուցել առանց շտապելու, ցանկալի է դասերից հետո, երբ դասարանում չկան սովորողներ, երբ միջավայրը նպաստում է շփմանը և անկախ զրույցի բովանդակությունից, այն միշտ պետք է սկսել դրական հարցեր քննարկելով: Պատմելով ծնողին առաջացած խնդիրների մասին՝ ուսուցիչը, այնուամենայնիվ, պետք է խորհրդակցի ծնողի հետ և լսի նրա կարծիքը տվյալ հարցի լուծման շուրջ:

Բացի դպրոցում անցկացվող զրույցներից, օգտակար են նաև ընտանիքում անցկացվող զրույցները, որոնք կարող են ընթանալ սովորողի ներկայությամբ կամ առանց նրա:

Արտադասարանային ուսումնադաստիարակչական աշխատանքներին ծնողների ներգրավումը: Ընտանիքի և դպրոցի համագործակցության տեսանկյունից մեկն է ծնողների կազմակերպչական օգնությունը սովորողների հետ արտաուսումնական ուսումնադաստիարակչական աշխատանքների հարցում: Կան տարբեր մասնագիտություն ունեցող ծնողներ, որոնց միջամտությունը արտաուսումնական ուսումնադաստիարակչական աշխատանքներին ապահովում է բազմազանություն և բարձրացնում այդ աշխատանքների որակական մակարդակը:

Դպրոցում ծնողների դաստիարակչական գործունեությունը իրականացվում է սովորողների հետ զրույցի, զեկուցումների և այլ ձևերով, դրանք նվիրվում են գիտության և տեխնիկայի, բժշկության, գեղարվեստի, ստողծագործական և բազմաթիվ այլ հարցերի զարգացմանը: Արտաուսումնական աշխատանքներում ծնողների մասնակցության

տարածված ձևերից մեկն է էքսկուրսիաների կազմակերպումը թանգարաններ, տեսարժան վայրեր և այլն:

Բաց դռների օր, հարց ու պատասխանի երեկոներ: Ցանկալի է դպրոցում պարբերաբար անցկացնել բաց դռների օրեր: Դասերին և արտաուսումնական պարապմունքներին հրավիրել ծնողներին, նրանք կարող են գալ ցանկացած դասին, տեսնել ինչպես են աշխատում իրենց երեխաները: Դասերից հետո անցկացվեն զրույցներ ծնողների հետ, ինչպես նաև զրույցներ որոշակի սովորողների ուսումնադաստիարակչական հարցերի վերաբերյալ: Այն ծնողները ովքեր հաճախակի կմասնակցեն բաց դռներին, կկարողանան տեսնել իրենց երեխայի ուսումնադաստիարակչական առաջընթացը, ուսուցչի կողմից տարվող աշխատանքները: Փորձը ցույց է տվել, որ սովորողները սիրում են բաց դռների օրերը: Սպասելով ծնողներին սովորողների ճնշող մեծամասնությունը ձգտում է որքան հնարավոր է լավ մասնակցություն ցուցաբերել դասերին, ինչն էլ նպաստում է կրթության որակի բարձրացմանը:

Հարց ու պատասխանների հանդիպումները: Նմանօրինակ հանդիպումները նպատակահարմար է անցկացնել ընտանեկան դաստիարակության թեմաներով մի շարք զրույցներից հետո: Այդպիսի հանդիպումների ժամանակ հնարավորություն է ընձեռնվում լսել սովորողների դաստիարակության, առողջության, կյանքի պարբեր հարցերի վերաբերյալ պատասխաններ:

Ինչպես ցույց է տալիս մեր աշխատանքային երկարամյա փորձը, ծնողների հետ պարբերաբար, նպատակաուղղված աշխատանքը բերում է նրան, որ դասարանում ստեղծվում է ծնողների և սովորողների առողջ մթնոլորտ և այդ պատճառով էլ թե ծնողները, թե սովորողները ակտիվ մասնակցում են դպրոցի կյանքին, հասարակական հանրօգուտ աշխատանքներին:

Ծնողների հետ աշխատանքի ոչ ավանդական ձևերը

Թեմատիկ խորհրդակցություններ: Յուրաքանչյուր դասարանում կան սովորողներ, որոնք ունեն նույնատիպ խնդիրներ՝ կապված ուսումնական պլանի և անհատական մոտեցումների հետ: Թեմատիկ խորհրդակցություններին պետք է մասնակցեն

մասնագետներ, որոնք կարող են օգնել խնդրի լուծման լավագույն տարբերակի ընտրության հարցում: Դրանք են սոցիալական մանկավարժը, հոգեբանը, իրավական մարմնի աշխատողները և այլ մասնագիտությունների տեր մարդիկ: Ծնողներն այստեղ ստանում են իրենց հուզող հարցերի վերաբերյալ խորհուրդներ:

Ծնողական ընթերցանություններ: Ուսումնական տարվա սկզբում՝ առաջին ծնողական ժողովի ժամանակ, ծնողները ուսուցչին ներկայացնում են իրենց հուզող հարցերը: Այնուհետև ուսուցիչը ուսումնասիրում է դրանք և առանձնացնում համապատասխան գրականություն ծնողների համար: Ծնողներն ու մասնավորապես պատմության ուսուցիչները քննարկում են սովորողի դաստիաչակության վերաբերյալ մասնագիտական գրականությունը:

Շաբաթական կամ ամսական տեղեկագրեր: Սրանք տեղեկություններ են հաղորդում սովորողների բազմաթիվ զբաղմունաների մասին: Դրանք լավ միջոց են ծնողներին տեղեկացնելու, թե իրենց երեխաները ինչ են սովորում, ինչպես են սովորում, երբ են ներգրավված համադասարանական միջոցառումներում և այլն:

Հանդիպումներ ընդմիջումների ժամանակ: Ծնողները գալիս են ուսուցիչներից իմանալու երեխաների մոտ հաջողություն ունեցող այնպիսի զբզղմունքների մասին, որոնք կարելի է կազմակերպել տանը:

Փոխհարաբերությունների ժամանակ ծնողներն ու ուսուցիչները հնարավորություն են ունենում միասին մշակելու այնպիսի ռազմավարություններ, որոնք լավ արդյունքներ են տալիս սովորողների հետ աշխատանքները կազմակերպելիս:

Ծնողների մանկավարժական խնդիրները: Ոչ բոլոր ծնողներն ունեն մանկավարժական կրթություն, այդ պատճառով նրանք իրենց երեխաներին դաստիարակում են ենթագիտակցաբար, առանց գիտական իմացության:

Դաստիարակությունն իրականացնելով գրքերի և համաշխարհային փորձի վրա հենվելով՝ նշանակում է չկրկնել տիպիկ և վտանգավոր սխալներ: Մեծահասակները միշտ փորձում են ապացուցել երեխաներին, որ իրենք խելամիտ անձնավորություն են, սակայն դա երեխաներին ամենևին էլ չի հետաքրքրում: Նրանց հուզում է այն, թե իրեն շրջապատող մեծերը որքան բարի, ազնիվ, ճշմարիտ և կարեկցող են և արդյոք ունեն խղճի զգացում: [1]

[1] Ս. Սարգսյան, Ս. Մկրտչյան, Վ. Սարգսյան, Կիրառական հոգեբանության պրակտիկում, էջ 74:

Վերջին տարիներին ձևավորվել է այսպես կոչված ծնողական բազմակողմանի կրթվածությունը, որի հիմնական նպատակն է գիտամեթոդական աշխատանքների անցկացում, որն իր մեջ ներառում է ծնողների միջև հոգեբանամանկավարժական գիտելիքների հանրամատչելիությունը: Այստեղ կազմակերպվում են հոգեբանամանկավարժական գրականության ցուցահանդեսներ, դաստիարակության հիմնախնդիրներին վերաբերող ֆիլմերի ցուցադրություններ և այլն:

Մանկավարժական լուսավորության թեմաների ձևերը ստեղծվում են՝ հաշվի առնելով տվյալ խմբի տարիքահոգեբանական առանձնահատկությունները, իսկ դրանց թեմաները ամեն տարի բարդանում են: Այսպիսով՝ ծնողները ստանում են մանկավարժական գիտելիքներ՝ հաշվի առնելով սովորողների տարիքային առանձնահատկությունները:

Ընտանեկան դաստիարակության բովանդակությունն ու մեթոդները

Դաստիարակության բովանդակություն ասելով՝ հասկանում ենք անձի բարոյական գիտելիքները, համոզմունքները, մարդկային որակների համակարգը, վարքագծի կայուն սովորույթները, որոնց սովորողները պետք է տիրապետեն՝ ելնելով դաստիարակության նպատակներից և խնդիրներից. այն է՝ բազմակողմանի զարգացած և ներդաշնակ անձի ձևավորումը:[2]

Այսօր դպրոցի առջև դրված են նոր մարտահրավերներ, որոնք պահանջում են հանրակրթական դպրոցը դարձնել առավել մեծ չափով ժողովրդական և հումանիստական: Պահանջվում է նաև դաստիարակության նպատակը դարձնել առավել իրական՝ հենվելով սովորողների ընկալունակության վրա: Դրա գլխավոր միջոցը մարդու կողմից մշակութային բազայի հիմքերի յուրացումն է, որն իր մեջ ընդգրկում է կենսական ինքնուրոշման, իրավական, աշխատանքի, քաղաքական, ժողովրդավարական, էկոլոգիական, գեղարվեստական, ֆիզիկական, ընտանեկան հարաբերությունների մշակույթը և այլն:

[2] Մակարենկո Ա.Ա. Ընտանեկան դաստիարակության մասին, էջ 57:

Դաստիարակության բովանդակության մեջ շատ կարևոր տարր է մարդու կենսական ինքնորոշումը: Կենսական ինքնորոշման մշակույթը մարդուն բնութագրում է որպես սեփական կյանքի և երջանկության օբյեկտ:[3] Շատ կարևոր է դաստիարակության անձնային ուղղվածությունը: Դա նշանակում, որ դաստիարակչական աշխատանքի շրջանում պետք է գտնվեն ոչ թե ծրագրերը, միջոցառումները, ձևերն ու մեթոդները, այլ սովորողը ինքը, իբրև բարձրագույն արժեք և նպատակ:[4]

Դաստիարակվողի ազատ կամքը դրսևորվում է, թե դաստիարակները հենվում են նրա հետաքրքրությունների, ռոմանտիկայի, ընկերական և քաղաքացիական պարտքի զգացման, ինքնագործունեության և ստեղծագործական ձգտման վրա:

Դաստիարակության մեջ կարևոր է կոլեկտիվիստական ուղղվածությունը, որտեղ պահանջվում է դաստիարակողների մեջ հաղթահարել այն վիճակը, որտեղ կոլեկտիվը դիտարկվում է իբրև կարգապահական միջոց, որը պետք է միայն ճնշի անձը և ոչ թե բարձրացնի նրա հոգեկան և բարոյական ուժերը: Էական է դպրոցի ձգտումը դեպի կյանք, որը ենթադրում է նորացնել դաստիարակության բովանդակությունը՝ հաշվի առնելով կյանքի նոր պահանջները:

Ընտանիքի համար պատրաստ լինելու բովանդակությունը իր մեջ ընդգրկում է հետևյալը. աշխատասիրություն, պատասխանատվություն երեխաների, ընտանիքի համար, հարգալից վերաբերմունք, հասարակության մեջ իրեն պահելու կարողություն, հիգենիկ հմտությունների յուրացում, ընտանիք կազմելու և համապատասխան պարտականություններ կատարելու կարողություններ և այլն:

Գիտական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ սովորողները իրենց ծնողների մեջ ամենից շատ գնահատում են բարոյական որակները՝ ազնվությունը, արդարացիությունը, կարգապահությունը, մարդկանց օգնելու պատրաստակամությունը, տրված խոստումը կատարելու կարողությունը և այլն:[5]

Երեխաների նյութական և հոգևոր պահանջմունքների ձևավորումը ընտանեկան դաստիարակության կարևոր և բարդ հիմնահարցերից մեկն է: Կարևոր է դաստիարակել

[3] Панфилова Т.С., Воспитание школьника в семье. с. 105.
[4] Պետրովսկի Ա.Վ., Երեխաները և ընտանեկան դաստիարակությունը, էջ 143:

[5] Ջ. Գյուլամիրյան, Երկխոսություններ ծնողների հետ, էջ 87:

օգնություն ցույց տալու պարտականություն, ինչպես հարազատներին, այնպես էլ բոլոր այն մարդկանց, ովքեր դրա կարիքը ունեն:

Սովորողներին ներկայացվող պահանջները պետք է մտածված լինեն, նրանց չի կարելի ծանրաբեռնել, ուստի պետք՝ պահանջների ծավալը մասերի բաժանել: Դրանք պետք է վերաբերեն միայն նրա ամենաանհրաժեշտ գործողություններին:

Ֆիզիկական դաստիարակությունը այսօր մղվում է առաջին պլան, քանի որ առաղջությունը չի փոխարինվում ոչ մի բանով: Ֆիզիկական դաստիարակությունն ընտանիքում հիմնվում է առաղջ ապրելակերպի վրա: Մանկավարժական մեծ վարպետություն է պահանջվում ավագ դպրոցականների հետ վստահության հարաբերությունների պահպանումը, նրանց լուսավորումը բարեկամության, սիրո, ապագա ընտանեկան կյանքի հարցերում:[6]

Մտավոր դաստիարակությունը լուծում է երկու գլխավոր խնդիրը. առաջինը սովորողներին գիտելիքներով զինելն է, որոնց յուրացման գործընթացում ձևավորվում է նրանց աշխարհայացքը և երկրորդը. սովորողների ինքնուրույն ճանաչողական գործունեության զարգացումը:

Բարոյական դաստիարակության իմաստն այն է, որ սովորողները պետք է յուրացնեն քաղաքացու բարայական նորմերն ու կանոնները, որոնք բնութագրում են նրա վերաբերմունքը հասարակության նկատմամբ:

Գեղագիտական դաստիարակությունը կոչված է զարգացնելու սովորողների ընդունակություններն ու օժտվածությունը, գաղափար տալ սովորողների կյանքում տեղի ունեցող գեցեցիկի վերաբերյալ:

Դպրոցի ծնողական կազմակերպություններն ու դրանց գործառույթները

Սովորողների ուսուցման և կրթության մակարդակը բարձրացնելու համար կարևոր է դասարանում ստեղծել ծնողական աշխատունակ կոլեկտիվ, որը կհասկանա ուսումնադաստիարակչական աշխատանքների խնդիրներն ու նպատակները: Նրանք պետք է գիտակցեն, թե ինչպիսի պատասխանատվություն են կրում սովորողների և

[6] Պետրովսկի Ա.Վ., Երեխաները և ընտանեկան դաստիարակությունը, էջ 114:

ծնողների դաստիարակության խնդրում: Ծնողական կոմիտեն ընտրվում է առաջին ժողովի ժամանակ:

Ուսուցչի և ծնողական կոմիտեի համատեղ գործունեությունը օգնում է ծնողների մոտ ձևավորել սովորողների ուսուցման և դաստիարակության կոլեկտիվ պատասխանատվության զգացում:

Դպրոցական գործընթացում ձևավորվել են ծնողական ժողովների մի քանի տեսակներ. ժողովներ, որոնց ժամանակ տարվում են դաստիարակության թեմաներով զրույցներ, ժողովներ, որոնք կազմակերպվում են ծնողական կոմիտեի կողմից, ժողովներ, որոնց ժամանակ ուսուցիչը պատասխանում է իրենց հարցերին և այլն:

Արդյունավետ են համարվում ընդհանուր ծնողական ժողովները: Դրանց ժամանակ ամփոփվում են կատարված ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունքները, ծրագրվում են նոր խնդիրները:

Նախապատրաստական փուլում ուսուցիչը կազմում է այն հարցերը, որոնք առաջ են եկել ուսումնադաստիարակչական աշխատանքների ընթացքում: Ծնողի ցանկացած մասնակցությունը դասարանական կամ համադպրոցական աշխատանքներին իր գնահատականն է ստանում ծնողական ժողովների ժամանակ:

Կան դպրոցներ, որտեղ ծնողական ժողովները վարում են ծնողկոմիտեի նախագահը կամ անդամներից որևէ մեկը: Ժողովի առաջին մասում որոշվում է ընտանեկան դաստիարակության խնդիրները: Երկրորդ մասը վարում է ուսուցիչը, նա տեղեկացնում է ծնողներին դասարանում կատարված ուսումնադաստիարակչական աշխատանքների մասին:

Ընտանիք-դպրոց առողջ համագործակցությունը՝ որպես սովորողի սոցիալականացման կարևոր միջոց

Բարենպաստ միջավայրը, դաստիարակության խելացի, նպատակաուղղված մեթոդներն ու ձևերը արմատապես փոխում են մարդու բարոյական կերպարը: Նրան հատուկ են ընկերասիրությունն ու մարդասիրությունը, բարեկամությունն ու պարտքի ու պատասխանատվության, հայրենասիրության, ազնվության, աշխատասիրության զգացումները: Անձնային այս և մնացած որակների նախադրյալների ձևավորումը,

դաստիարակումը հիմնականում տեղի է ունենում ընտանիքում: Երեխան աշխարհը սկսում է ճանաչել ընտանիքի միջոցով:

Այսօր լուրջ խնդիրներն ունենք ընտանեկան դաստիարակության բնագավառում: Գողտնիք չէ, որ շատ ծնողներ երեխաների դաստիարակության գործում հանդիպում են լուրջ դժվարությունների և չկարողանալով հաղթահարել դրանք, թույլ են տալիս լուրջ սխալներ: Մանկավարժներն ու հոգեբանները, մասնավորապես սոցիալական մանկավարժները պետք է մեթոդական ու գործնական օգնություն կազմակերպեն նման ընտանիքներին:

Ծնողները հանդես են գալիս որպես երեխաների սոցիալականացման գործընթացը ուղղորդող սուբյեկտներ: Նրանք հաջողության կհասնեն այն դեպքում, երբ սովորողների մոտ հեղինակություն են վայելում: Ընտանիքի ամրությունը, սովորողների ճիշտ դաստիարակությունը հիմնովին կախված է նրանց համերաշխությունից: Կարևոր է ընտանիքում ծնողների կողմից երեխաներին ներկայացվող պահանջների միասնականությունը: Ծրողներից յուրաքանչյուրը պետք է հստակ կատարի իրեն վերապահված պարտականությունները: Սովորողները հաճախ ընտանիքում ընդօրինակում են իրենց ծնողներին:

Սովորողների համար դեռ կյանքը ամբողջովին անհասկանալի է, նրանք փորձում են միանգամից բացահայտել կյանքի գաղտնիքներն ու դժվարությունները:

Կարևոր է ընտանեկան միջավայրում սովորողի բարոյական կերպարի ձևավորման համար անաղարտ մայրենի լեզվին տիրապետելը:

Ահրաժեշտ է նաև հաշվի առնել դաստիարակության գործընթացը իրականացնելիս սովորողի անհատական հոգեբանական առանձնահատկությունները, նրա խառնվածքը, բնավորությունը, հետաքրքրությունները, նախասիրությունները, հակումները, պահանջմունքները, հնարավորությունները և այլն:

Ընտանիքը, դպրոցը և հասարակությունը այն գլխավոր օղակներն են, որոնց համատեղ ջանքերով լիարժեք է դառնում մատաղ սերնդի դաստիարակությունն ու նրա ներդաշնաբակ զարգացումը: Բնական է, որ այդ գործընթացում հիշյալ օղակներից որևէ մեկի թերացումը զգալի վնաս կարող է հասցնել ընդհանուր գործին: Այդ օղակները կոչված են օգնելու մեկը մյուսին, շտկելու թույլ տված սխալներն ու բացերը: ՀՀ կրթության օրենսդրական հիմունքում ասված է. «Ընտանիքում դաստիարակությունը պետք է

օրգանապես զուգորդվի ուսումնական հաստատությունների, նախադպրոցական և արտադպրոցական հիմնարկների, հասարակական կազմակերպությունների դաստիարակչական աշխատանքների հետ»:[7]

Եզրակացություն

Հետազոտական աշխատանքն իրականացնելիս եկել ենք այն եզրահանգման, որ ժամանակակից տեղեկատվական հասարակությունը պահանջում է դպրոցից և բնականաբար գրականության ուսուցիչներից, դաստիարակել այնպիսի սերունդ, որը կարող է ինքնուրույն սովորել, զարգացնել ճյուն և ստեղծագործ միտքը,

[7] Հարակրթական պետական կրթակարգ, Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ, էջ 6:

լեզվամտածողությունը, կարողանալ ձևավորել սեփական աշխարհայացքը, ապա ազդել նաև շրջապատի աշխարհայացքի ձևավորման վրա: Դրա համար մեծ հնարավորություններ է ընձեռում համընդհանուր կրթական գործունեության զարգացումը: Այդ պատճառով նոր սերնդի կրթության չափորոշիչների «պլանավորված արդյունքները» որոշում են ոչ միայն առարկայական, այլև մետաառարկայական և անձնական արդյունքները:

Նոր սերնդի դպրոցական չափանիշների հիմնարար տարբերությունը նրանց կենտրոնացումն է ոչ միայն առարկայական կրթական արդյունքների հասնելու, այլև, առաջին հերթին, ուսանողների անհատականության ձևավորման, կրթական գործունեության ունիվերսալ մեթոդների տիրապետման վրա, որոնք ապահովում են հաջողություն ճանաչողական գործունեության մեջ: Հետևաբար, մենք՝ ուսուցիչներս, ստիպված ենք հրաժարվել ավանդական տեխնոլոգիաներից և անցնել համակարգային գործունեության մոտեցման, երբ կրթության նպատակը սահմանվում է որպես սովորողի անձի զարգացում՝ հիմնված գործունեության համընդհանուր մեթոդների մշակման վրա: Ինչպես նշում են հոգեբաններն ու ուսուցիչները, դպրոցականների մոտ արժեքային կողմնորոշումների ձևավորումը, որոնք որոշում են անհատի գործունեության և գործունեության ուղղությունն ու բովանդակությունը, գնահատման և ինքնագնահատման չափանիշները, սկսվում է դեռահասության տարիքից: Տարրական դպրոցական տարիքում միայն առանձնացվում են անձնական արժեքները, տեղի է ունենում դրանց հուզական զարգացումը, որն ամրագրվում է գործնական գործունեության մեջ և աստիճանաբար գտնում է ճիշտ մոտիվացիոն արտահայտությունը: Հայոց լեզուն և հայ գրականությունը, հայ մարդու համար կարող է և պետք է դառնա այն առանցքը, որի շուրջ ձևավորվում են շատերի զգացմունքները, կարծիքները, համոզմունքները, դիրքորոշումները, նրանց պատրաստակամությունը, հայրենիքի շահերին գործուն քայլեր անելու կարողությունը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա.Ս., Մանկավարժություն, Երևան 2004:
2. Արզումանյան Ս., Իրավաբանական հոգեբանություն, Երևան, 2004:
3. Արզումանյան Ս., Մկրտչյան Ս., Սարգսյան Վ., Կիրառական հոգեբանության պրակտիկում, Երևան 2002:
4. Բաբանսկի Յու. Կ., Մանկավարժություն, 2-րդ հատոր, Երևան 1987:
5. Գյուլամիրյան Ջ., Երկխոսություն ծնողների հետ, Երևան, 2002:

6. Հարակրթական պետական կրթակարգ, Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ, Երևան, 2004:
7. Մակարենկո Ա.Ա., Ընտանեկան դաստիարակության մասին, Երևան 1985:
8. Ջայնոտ Խ.Ջ., Ծնողներ և երեխաներ, Երևան 1988:
9. Պետրովսկի Ա.Վ., Երեխաները և ընտանեկան դաստիարակությունը, Երևան, 1987:
10. Թորգոմյան Լ. Մանկավարժական արժեբանության հիմունքներ: Ուսումնական ձեռնարկ մանկավարժական բուհերի ուսանողների համար, Երևան, 2011
11. Т. С. Панфилова, Воспитание школьника в семье, Москва 1976